

ՎԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 Ֆր.

Վեցամսեայ . . . 6 «

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիս միկ ծրարով

Տարեկան . . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 Ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60

Վեցամսեայ 1. 50 Տօլար «

ԿԱՆԵՆԻԿ

Մանուցման և ողբ
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՉՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԻ

Rédaction du journal

„Ira vounk“

VARNA (Bulgarie)

Редакция

НАВѢСТНИКЪ

Иравунк“

ВАРНА

Գրութեան տունը և տպարանը

ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՒ ՍՈՒԼԹԱՆԸ

Քանի մը շարժումներէ Կ. Պօլսոյ հայ թերթերը Կիլիկիոյ կաթողիկոսին մայրաքաղաք գալուն առթիւ օրը օրին սիւնակներ կը լեցնեն և հանրութեան միտքը նորին Ամենապատուութեան այցելութիւններովը և ընդունելութիւններովը կը զբաղեցնեն, առանց արտօնաբերելու ըլլալու բուն իրողութեան մասին բառ մը գրելու։ Այդ երկար սիւնակները իբր ժամանց ամէն օր կարդալու համար մարդ տաղտուկ կը զգայ, քանի որ բուն ազգային խնդիր մը շոշափող ոչինչ չէ կարելի գտնել անոնց մէջ։ Մինչդեռ կաթողիկոսին յանկարծ Պօլսոյ գալու բարձրագոյն հրահանգը ազգային կենսական հարցի մը հետ սերտ կապ ունի։ Ահա թէ ինչպէս։

Ամենայն Հայոց Վեհ. կաթողիկոսին կողմէ Եւրոպա զբոսնող պատուիրակութիւնը Սուլթանին մեծ տհաճութիւն պատճառած էր։ Այդ պատուիրակութեան ի գլխի մաց կաթողիկոսին թրքահայոց պաշտպանութեան և հայկական նահանգներու բարենորոգման մասին դատախազ կանգնելու ձեռնհասութիւնը չէզոքացնելու համար, Սուլթանը նախ Օրմանեան պատրիարքը պալատ հրաւիրեց ու հրամայեց որ Խրիմեան Հայրիկին հեռագրէ երկու եպիսկոպոսները Եւրոպայէ ետ կոչել տալու համար։ Օրմանեան առարկեց թէ կաթողիկոսը իր հոգեւոր պետը ըլլալով կարող չէ Անոյ այդ տեսակ հրահանգ մը տալու։ Բայց Սուլթանը պընգեց իր պահանջին վրայ և վեց ժամու չսփ Պատրիարքը պալատին մէջ փակուած պահեց։ Օրմանեանի պատասխանը միշտ նոյնը եղաւ, գիտնալով թէ եթէ առաջարկուած հեռագիրը ուղղէր Վեհ. կաթողիկոսին, թէ՛ ուրիշ արժէք չպիտի ունենար և թէ ինք այս անգամ բոլորովին վար-

կաբեկ պիտի ըլլար ամբողջ հայութեան առջեւ։ Սուլթանն ալ վերջապէս ըմբռնեց ու համալրեցաւ թէ իր առաջարկը բաւարար չէ և արգիւնք չը կրնար ունենար ուստի թողուց որ Օրմանեան մեկնի։

Նոյն օրը նախարարական արտակարգ ժողով մը գումարուեցաւ Եւրոպայի մէջ և կատարուած խորհրդակցութեան իբր արգիւնք որոշուեցաւ Կիլիկիոյ կաթողիկոսը Պօլսոյ բերել անոր իր թեմբուսն մէջ պտոյտը ընդհատել տալով, Յայտնի է թէ տարիէ մը առաջ էր որ նորին Ամենապատուութիւնը Պօլսոյ գալու արտօնութիւն կը խնդրէր, բայց կառավարութիւնը կը զըլանար իրեն։ այս անգամ յանկարծ հրաւիրուելը նախ դարձանալի թուեցաւ։ սակայն կայսերական այդ բարեհաճութեան ետեւ ինչ չար նպատակ պահուած ըլլալը շուտով երեւան ելաւ։ Տ. Սահակ կաթողիկոսին Պօլսոյ հասնելուն առթիւ հրահանգուած շքեղ ընդունելութիւններուն ու շնորհում շքանշաններուն անմիջապէս յաջորդեց առաջարկ մը թէ Սուլթանը և իր կառավարութիւնը կը բաղձան զինք ամբողջ թրքահայոց կաթողիկոս ճանչնալ և հռչակել։ Այս տեսակ առաջարկ մը հանգուցեալ Մըկրտիչ Քէյքիսիկեան փառամուկ և շահասէր կաթողիկոսին եթէ ներկայանար մեծ ուրախութեամբ պիտի ընդունուէր։ Բայց Տ. Սահակ կաթողիկոս Խապայեան կըտրուկ կերպով մերժեց, համոզուած ըլլալով, թէ Սուլթանին այդ բարեհաճութիւնը իր սեւաչքին համար չէ, այլ տառապող հայ ազգին վիշտերը քաղաքակիրթ աշխարհի պաշտօնապէս հաղորդելու անկարելիութեան մատնելու համար է, և մանաւանդ թէ Հայաստանեայց եկեղեցւոյ սրբազան աւանդութեանց և շահերուն դէմ դաւադրանք մըն է։

Խնդիրը այժմ այս վիճակին մէջն է։ տեսնենք Եւրոպայի վամբուր գեռ ինչ խորամանկ մի-

ջոցներու պիտի գիմէ հայ պատուիրակութեան պետութեանց առջեւ յանուն թուրքիոյ հայութեան խօսելու ձեռնհասութիւնը չէզոքացնելու համար։

ՆԱՄԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ

Մեր սիրասուն Հայրենիքին վեհագի բարեկամները, հայ առասպելը կը պատմէ թէ օր մը Մարաց թագաւորը և Հայոց թշնամին Աթաշակ երազին մէջ տեսաւ կին մը Հայաստանի ձիւնազտակ լեռներուն մէկուն վրայ նստած՝ որ իր երկանց ցաւերուն մէջ երեք հատ չափահաս քաջորդիներ ծնաւ։ Անոնց մէջ մին Առիւծի վրայ հեծած Արեւմուտք, միւսը ինձի վրայ՝ հիւսիս և երրորդը՝ վիշապի մը վրայ։ Մարաստան արշաւեց։ Դուք ալ երկար տարիներէ աստի մեղ համար երկնեցաք եւ այս Հայ քաջորդիներուն պէս ձեր «Արմէնիան» ալ չափահաս ծնաւ, խելահաս և առողջ մարդու մը բոլոր գեղեցիկ առնականութիւնովը։ Եւ այսօր մարդկութեան արտադրած աղնագոյն հողիներէն բոլոր խոլխոսքերու արագաթափիչ թեւերով պիտի սուրայ հիւսիս, հարաւ արեւելք արեւմուտք ամեն կողմ ուր մշակուած մտքեր կը գտնուին պաշտպանելու համար դատ մը որ այլեւ ոչ Հայուն և ոչ ալ Անդրկասցիին կը պատկանի այլ պարզապէս բրիտանեայ քաղաքակրթութեան։

«Արմենիայի» այս առաջին թիւը իր առատ պարունակութիւնովը, պերճախօս լեզուովը և գեղեցիկ ձևովը ամեն հայու սիրտը պիտի շարժէ ու աչքերը արցունքոտէ։ Խմբագրութեան վերեւ գտնուող անձերը որոնք Ձեր կիսագունտին մտքի և սրտի աղնականութեան ամէնէն յայտնի դէմքերէն են՝ մեզի կը ներ-

շնչեն այն խանդավառ վստահութիւնը թէ այլեւս արդարաւէր եւ կարողի Ամերիկայի մէջ մեր դատը լաւագոյն փաստարաններու ձեռքը կը գտնուի։ Մէկ անուն մը միայն պակսեցաւ հոն ամեն հայու սիրական դարձած Օրիսրդ Պլէքուէլինը։ Բայց Մենք գիտենք որ բեմին ետեւ իր կարող ձեռքը ու յաջող ձայնը չը պիտի թերանան Ձեզ օգնելու ամէն վայրկեան։ Ֆրանսան իր Բրո արմէնիան տուաւ լատինախօս երկիրներուն, Դուք ալ Ձեր «Արմէնիան» տուէք անկիւսսաք սօն աշխարհին։ «Մաւուզ իր հազարաւորները դարկաւ, Դաւիթ իր բիւրաւորները», բայց երկուքն ալ նոյն ժողովրդին ազատագրութեան համար կռուեցան։ Հայասէր և Հայոց պաշտելի Կլատսթոնին բառերը դուրսեցիք Ձեր հանդէսին ճակատը «Հայաստանին օգնել քաղաքակրթութեան օգնել է»։ Հայերս ալ այս ճշմարտութեան զգացումովը լեցուած առեւի թարմ և մաքուր ուժերով պիտի շարունակենք մեր մաքառումը։ որովհետեւ այն միայն մեր խեղճուկ գոյութիւնը պաշտպանելու համար չէ՛ այլ քրիստոնեայ քաղաքակրթութեան լոյսը և կեանքը տարածելու համար հոն ուր մեռելութեան խաւարը կ'սպառնայ տիրել։

Խորին երախտագիտութեամբ և Ձեր մարդասիրական նոր ձեռնարկին աջակցելու անկեղծ բողբոջով կ'ողջունենք խնդաբեր ծնունդը ամերիկեան «Արմէնիային»։

ՕՐԻՓՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՇԱԲՐ . ԱՐԵՒԵԼԻԻ ՊԱՏԱՐԱԶՄ

Ենթայի երկարատեւ և արեւընդուն ճակատամարտը դադարէ է։ Նախադրական կողմը՝ անթուրի եւ անդամանելի կորուստներ տալով պարտուեցաւ բայց դարձեալ բաւական յաջողութեամբ իր գնդապետ խաղէն դուրս քաշեց։

Կերեսի թէ ձաքօնցիները սրբա-

զան Պապին պէս բոլորովին ան-
սրբալ չեն գտնուած իրենց ռազմա-
գիտութեան մէջ եւ ոչ ալ Բուր-
բակին վեր թողը մինչեւ հիմա
անպիտան անկարող մէկն է : Գէթ
իւր ծրագիրներուն մէջ՝ սա կէտը
միշտ եւ անվրէպ կ'իրագործուի :
Ի հարկին նախնայել ապահովարար :
Բայց այս անգամ Ռուս հրամա-
նատարը զէպի հիւսիս չէ քաջուած
այլ թշնամիին դիմացը՝ բաւական
լաւ դիրք մը բռնելով՝ անոնց վը-
րայ նոր յարձակում մը ընել կ'ըս-
պանայ եղբի եւ իւր սթրատէգի-
յարժուանքով եւ հակադարձումնե-
րով դանոնք տնայէս կ'ընդդիմե-
նել որ չեն կրնար Փարթ Արթու-
րը պաշարող բանակին յաւելու-
նական գունդերը զրկել եւ բերդա-
քաղաքին անկողնը փութացնել :
Ռուսերը կը ջանան հաւատարմե-
լիքնք իրենց եւ Յարմապիներուն
թէ մէկ կողմէն Փարթ Արթուրի
ձաքնական բանակը իրենց մարդա-
ծախ յարձակումներով պիտի տկա-
րանայ եւ վհատի, միւս կողմէն
Պալթիկ ծովուն Ռուսական նաւա-
սարմիղը պիտի հասնի եւ վճռո-
ղակաւ հարուածը տայ մի քանի
մանր խոնր յաջողութիւններով շփա-
ցած ձաքնցիներուն : Ստոյգ է թէ
Փարթ Արթուրի հերոսական դիմա-
դրութիւնը այս Մանչուրական պա-
տերազմին մէջ Ռուսիոյ փառք եւ
պատիւ բերող միակ բանն եղաւ :
Բայց ձաքնական սոււրբը կը տե-
ղան միշտ, քաղաքին շէնքերը կը
փոշիանան, մարդիկը, ռազմավոր-
քը եւ պաշարը կ'սպառին, բերդ
քերթի ետեւէ՝ թէպէտ դանդաղօրէն
— ձաքնցիներուն ձեռքը կ'իյնայ :
Երբ պիտի հասնի Պալթիկի սոր-
միղը Փարթ Արթուր, ճամբան
երկար է եւ Փարթ Արթուրի կեան-
քը կարճ : Սեւ ծովուն կամաւոր
ասորիկին պէս՝ այս ալ հիմակուց
սկսաւ յաւաւարտի տեղ ծովահինու-
թեան վարժութիւններ ընել : ան-
պատասխար նաւերը կարծես նուազ
վաճառք եւ աւելի հնչումնք պատ-

ճառելով ծովամայն կ'ըլլան քան թէ
թէ ձաքնցիներուն յամառ եւ հա-
տատուն զրահաւորները :
Պալթիկի սորմիղին այս տեսա-
կէն առաջին փորձը տեղի ունե-
ցաւ հիւսիսային ծովուն վրայ
Անգլիոյ շըլ ծովաքաղաքին դէմը :
անցեալ ուրբաթ գիշեր : Ծովը
Գալէ չհասած՝ Ռուս մարտանա-
ւերը բաղնուեցան խեղճ ձկնորս
նաւերու որոնք առանց երկար բա-
րակի 18 անգղիական կեանքերով
մէկտեղ ծովուն յատակը իջան : Այս
չափաւորութիւնը բաւական չէր :
Ռուսերը քիչ մը հեռուն 50 էն աւելի
ուրիշ ձկնորս նաւեր նշմարելով ա-
նոնց վրայ կրակ բացին եւ կէս ժա-
մու չափ ոռոմս տեղացին :
Անգլիացիները կանաչ լոյսերով բո-
ղոքեցին թէ իրենք խաղաղասէր եւ
չէզոք ձկնորսներ են, բայց որո՞ւ պի-
տի հասկնան : Մեքսիկաները դարձան
անվրդով, բազմահարուածեան թնթա-
նութիւնը հուր եւ մահ ժայթքեցին ի-
րենց բերնէն : Անգլիացիներուն կող-
մէն նաւապետի մը դանկը իւր որդւոյն
աչքերուն առջեւ ջախջախեցաւ եւ
ձկնորսի մը գլուխ թաւաւ : 30 ի չափ
վերաւորներ դետինը փութեցան :
Ասկէջ վերջ՝ Ռուսերը հեռացան պա-
տերազմին հեղուկ գաշտէն՝ կերելի
այն գերազոյն զոհուածութեամբ թէ
իրեն անգլիացի ձկնորսներ ծպտուած
ձաքնական թորթիւնաւերու սորմիղ
մը ցիր ու ցան ըրած են : Բայց թէ
ինչպէս առանկ համոզում մը կրնային
գոյացնել, կեանքացի վարդապետին
ըսածին պէս՝ « օրհնեալ ժողովուրդ,
հրաշք հոն է » :
Որովհետեւ՝ թէ կոյր չէին՝ ան-
չուշ իրենց զօրաւոր լոյսերով տեսան
որ խեղճ ձկնորսները մեծ քանակու-
թեամբ ձուկ բռնեցին եւ զանոնք
մաքրելու գաղաթ էին :
Երկու օր ամբողջ մաղի պէս ծակ-
ծրկուած այդ զօրազդ նաւերը ծովուն
վրայ քաջաշուքով հասան շըլ : Բա-
ղաքապետը անմիջապէս Լոնտոն լուր
ղրկեց եւ ձկնորսները, ճամբայ հանեց :
Թաղաւոր, նախարար իրար անցան :
Խնդիրը քննուեցաւ եւ հիմա Ռուսա-

կան կառավարութեան քաղաքաբնէն
եւ գոհացում կը պահանջուի :
Անգլիացիները, հպարտ Ալպիոնի
պաղարկուն զաւակները իրենց մարմին
վրայ եղած այդ խայթուածն սաստիկ
յուզուած են : Լոնտոն՝ թագաւորին
պալատին առջեւ ժողովուրդը, բար-
կութեան եւ բողոքի ցոյցեր սարքած
է : Իսկ Ռուսիա՝ անցեալ ամառ իւր
Սեւ ծովու կամաւորներուն ըրած
խայտառակութիւններէն չխրատուած՝
այս նոր զօրաւորութեան առջեւ՝ ցա-
ւակցութեան ցուրտ եւ քաղաքավարի
բանաձեւերով կը շատանայ առ այժմ :
Բայց ատով կը վերջանայ գործը : Այս
անգամ ալ իրեն չպիտի սովորեցնեն
թէ քաղաքակրթութեան ամենատար-
բական պայմաններէն մէկը՝ աղքատու-
թնչպէս անհատներու կեանքը եւ ի-
րաւունքները յարգել է :
Ահա քեզի եղբար-կատակերպական
կացութիւն մը որուն առջեւ մարդ
չպիտի թէ արդեօք ինքուրը զսպէ
թէ այլոնքը :
ՕՐԻՑԸ
ՊՈՒԼԿ . 'ՏՆԵՎՆԻՔ'
ԼՐԱԳԻՐԸ ՄԻՈՒՅԻՆԱԿԱՆԴԻ
**«Տնեվնիկ»ի հետեւեալ խում-
բագրականը, որ մակեդոնական
կազմակերպութեանց կ'ակնարկէ,
մինչեւ աստիճան մը կը յար-
մարի նաեւ մեր յեղ. կազմակեր-
պութեանց ալ, որունց խորին ու-
շադրութեանը կը յանձնենք
զայն :**
ՀԱՄԵՐԱՇԻ ԳՈՐԾՈՒՆԷ՝
ՈՒԹԻԻՆԸ
**Կնճռոտութիւնները որ երևան
եկան վերջերս Մակեդոնիոյ մէջ,
օտար աղբայնութիւններու գա-
ղափարատարածումին եւ սերպ ու**

յայն հրոսախուժեալ յանկար-
ծական գործունէութեան հետե-
ւանքով պարտք կը դնեն պիւն
պուլկարի վրայ մտածել ասիա-
կան անտանելի լուծին տակ հե-
ծող այդ մարտիրոս գաւառին
վրայ :
Բարենորոգումներու դիմակին
տակ՝ այսօր նախկինէն աւելի
ստեղծալի վարչութիւն մը հաս-
տատուած է Մակեդոնիոյ մէջ :
Թուրք իշխանութիւնը եւրոպա-
կան պետութեանց Մայրաքոյն
Արեւելքի գէպքերով զբաղուած
ըլլալու պարագայէն օգտուելով,
ճիշդ յարմար ժամանակը կը
գտնէ պուլկարական տարրը ար-
մատախիլ ընելու « բաժանեալ » զի
տիրեցեալ ի դրութեամբ :
Այս տխուր կացութիւնը արդէն
մակեդոնա-անդրիստայօլսեան
գործիչներու ուշադրութեան
վրայած չէ :
« Ռեֆորմ » լրագիրը հետեւե-
ալ բաւական լուրջ խորհրդա-
ծութիւններ կ'ընէ այդ մասին :
« Թուրք կառավարութիւնը նախա-
խեղ մը անգամ չփոխեց իւր վարմուն-
քէն՝ հանգչ պ Մակեդոնիոյ ու Անդրի-
ստայօլսեան գաւառներու պուլկար
տարրին, հակառակ հանդիսաւորապէս
կնքուած պուլկարա թուրք համաձայ-
նութեան եւ պուլկար կառավարու-
թեան աներկբայեցիկ խաղաղասէր
քաղաքականութեան : Սերպիոյ ու
Յունաստանի մէջ յաւ վերահասու քո-
լալով իրերու այս վիճակին, ահապա-
րիցին օգտուել քարեկաջող վարկենէն՝
ամբողջ քանդիլու եւ մակեդոնական
միութեան շատոնց երազուած խզու-
մը պարտաւորու համար :
Բայց ցաւալիքն որ պուլկար հատա-
րակութիւնը ոլիմպեան հանդարտու-
թեամբ կը դիտէ Մակեդոնիոյ մէջ
մղուած այս պայքարը :
Այդ հանդարտութիւնը երկու պատ-
ճառի կրնանք վերագրել :
Նախ՝ այսօրուան սիրունիկն շուտով

ՆԵՐՍԵՍ ԱԾՏԱՐԱԿԵՑԻ

(Արտատպուած ԲԱԶՄԱՎԷՊ հանդէսէ)

Կաթողիկոսը կամենում էր շարու-
նակել իւր խօսքն, այդ նիւթի վերայ,
Բայց Պապիւն չէր ներդրուել ասաց
« Թաքնեմք սակայն անցեալը », Ներսէսը պա-
տասխանեց, « 18 տարի է, որ ես թողել եմ »
եւ սկսեցին ուրիշ առարկաների վերայ խօսել :
Պապիւն տրտնջացել էր վնասակար նախա-
բար կոմս Չէրնիշեւի մօտ, թէ կառավարու-
թեան ինձ կարծելով Ներսէսի թշնամի իմ կար-
ծիքը չկամեցաւ իմանալ նորա մասին, երբ ընտ-
րութիւնը կայացաւ : Պապիւն չէր յայտնած տր-
տունջի մասին կաթողիկոսին պատմել էր ին-
քը կոմս Չէրնիշեւի . սա 1840 թուին այցելել
էր ս . Էջմիածնին եւ թիֆլիզում լսել էր
քաղաքացիների ջատագովութիւնը Ներսէսի մա-
սին : Չէրնիշեւն էլ Ներսէսի հետջառա մտերիմ
բարեկամ էր : Կաթողիկոսը Պապիւն զօրութեւ
ղած միջոցին ստացաւ Կ . Պօլսի իշատէժոս
պատրիարքի գրութիւնն, որով ծանուցանում էր
էր թէ երբ Ներսէսի կոչուողը ստանում են,
չօյն օրը պատարագիչ է լինում ինքը պատ-

արքն, եւ պատարագին յիշատակում է կաթո-
ղիկոսի անունն եւ բոլոր վիճակներին հրամա-
նագրում է, որ եկեղեցիներում յիշատակեն
նորնախի հայրապետի անունը : Պէտք է գիտե-
նալ, որ Տաճկաստանի Հայեր Յովնանէս կա-
թողիկոսի անունը չէին յիշատակում, ըստ որում
նորա ընտրութիւնը եղել էր, առանց Տաճկա-
հայերի մասնակցութեան . իսկ Ներսէսի ընտրու-
թեան մասնակցել էին, ուղարկելով պատգա-
մաւոր Դիարբէքիւրի առաջն իւր Պետրոս վարդա-
պետին : Պարսկաստանի եւ Հնդկաստանի Հայերն
էլ ուղարկել էին Սիմոն վարդապետին : Երկու
վարդապետներն էլ պարզաւարտութեան մեր տէ-
րութիւնից վարդապետական աղամանդեայ լաւ-
ջական խաչով, Նախարար Պետրոսիին յայտնեց
կաթողիկոսին, թէ կայսեր ցանկութիւնն է չը-
նորհել Կ . Պօլսի պատրիարքին, Մատթէոսին
ս . Անտոնի առաջին աստիճանի չըստչանը,
բայց կաթողիկոսն ասաց, թէ Տաճկաստանում
չըստչանն ախթան մեծ նշանակութիւն չունի,
եւ կ'աղարկեմ իմ սեփական աղամանդեայ պա-
նակէն, որ եւ յանձնեց նախարարին, նա էլ
ուղարկեց Կ . Պօլս, արտաքին գործերի նա-
խարարի միջոցով : Կաթողիկոսին զանաւարնից
ճանապարհածախք էր նշանակուած 3000 բուր-
լի : 1841 թուի մայիսի կէսին ուղեւորութեանը
Մոսկուա : Վեհափառն այցելեց Լազարեանց ճե-
մարանն, Երմովկին, Մոսկուայի մեարապոլիս ֆի-

լարիտին եւ նշանաւոր հայերին : Լազարեանց
ձեւարանում պրոֆէսոր Դաւիթովը հայտնեց էր.
կաթողիկոսին յայտնեցին թէ նա հայ աշակերտ-
ներին համոզում է հայերէն ընթերցանութեամբ
չպարագել, կաթողիկոսը հրաժարեցնել տուեց
նորան եւ նորա տեղ կարգեցին պրոֆէսոր Մա-
րոտիկին : Այն ժամանակ Մոսկուայում կենում
էր առանց պաշտօնի Միքայէլ եպիսկոպոս Սալ-
լանթեանը : Սա Ներսէսի ինսարարեայի առաջ-
նորդ եղած ժամանակ 1842 թուին գրում է Յով-
հանէս կաթողիկոսին թէ Ներսէսը զառաւել
է աչքերը կուրացած ուստի նորան հարկաւոր
է հրաժարեցնել առաջնորդութիւնից, խնդրելով
որ իրան նշանակի նորա տեղը : Նորա այս գը-
րութիւնը հասնում է Էջմիածնին այն ժամանակ
երբ Յովհանէս կաթողիկոսն արդէն վախճանած
է լինում : Տեղապահ Բարսեղ արքեպիսկոպոսն
ստանում է Սալլանթեանի նամակն, եւ երբ
Ներսէսը Պետրոսիւրգումն էր, ուղարկում է նո-
րան : Այս իմանալով Սալլանթեանն, որ իրել
հայ եպիսկոպոս պարտական էր ներկայանալ
կաթողիկոսին, ոչ ներկայացաւ եւ ոչ եկեղե-
ցի եկաւ : Ներսէսը ժողովուրդի ներկայացուցիչ-
ներին ժողովի հրաւիրեց, եկել էր եւ ինչա-
տուր աղան . նորանց ժողովուրդուց յետոյ Թա-
ղէոս վարդապետին ուղարկեց, որ Սալլան-
թեանին հրաւիրի ժողովի գալու : Գնում է Թա-
ղէոս վարդապետն եւ հրաւիրում, բայց Սալ-

յոգնելուն՝ մղելէ կոխ մը, որ չա-
րունակեալ ջանք ու միջնա իսկ յա-
մառութիւն պահանջէ :

Սրկերորդ ու գլխաւորապէս՝ մակե-
դոնական ժողովուրդին քաջակորով
յատկութեանց վրայ մեր ունեցած
հաւատքին, հաւատք անոր ընդու-
նակութեան վրայ՝ կարենալ չափուե-
լու իր թշնամեաց հետ :

Սակայն չորսանալով հանդիմա մա-
կեդոնական ժողովուրդին գերազանց
յատկութիւնները, պատերազմելու եւ
իր օճախին համար կորովի կ'սիրէ մղե-
լու ընդդէմ նակութիւնը, անմտութիւն
պիտի ըլլար չափազանցել այդ յատ-
կութիւնները եւ միւս կողմանէ կոյր
ձեւանալ նորահաս տառ կացութեան
հանդէպ :

Զի, տարակոյս չկայ, թէ թուրք կա-
ռավարութիւնը հաւատարմապէս իր
ունի արդէն պուլիսի քաղաքականու-
թեան վարած ոտութեան վրայ, որով
սնչափ մեծ աղատութեամբ կը գործէ
պուլիսիներուն դէմ :

Մակեդոնիոյ մէջ պուլիսի տարբին
դէմ մղուած պայքարին մէջ, Յոյներն
ու Սերպերը նախ երեւան եկան իր
օճախական թրքական քանդիչ քա-
ղաքականութեան, առանց իրենք վճա-
րական ու գործնական մը կատարե-
լու : Այսօր, սակայն, անոնք ալ ըս-
կան թշնամական գործունէութեան
ընդգրկելով գործելու յեղափոխական
ձեւը : Անոնք՝ Մակեդոնիոյ երկու կող-
մերէն իրարու ետեւէ հրոսակներ
կը մտցունեն, եւ զէնքի ուժով ու
թրքաց բարեյոճար գործակցութեամբ
կը ճնշին մակեդոնական յեղափոխա-
կան ուժերը ջլատել եւ ժողովուրդին
տէր ըլլալ :

Այսպէս, արեւան հեղեղներէ ու զար-
հուրելի աւերումներէ յետոյ, Մակե-
դոնիոյ մէջ ներքին կոխ մը կը ծով
որ աւելի ոտակալի ու քանդիչ է քան
նոյն իսկ ապստամբութիւնը : Մակե-
դոնիան կըլլայ առաջինը մը ուր Մա-
կեդոնացիք մէկգլմէկ պիտի կոտորեն,
բոլորեքքի քրիստոնէայ փոքրիկ պե-
տութեանց աղմկալից ծափահարու-
թեանց ու խախտութիւն աղաղակներու
մէջը :

Մակեդոնա—Անդրիանուպոլսեան եւ-
րոպայական թիւերը այսօր դոնէ պէտք
է խելքը գլուխը ժողովէ, եթէ իր սրբ-
տին մէջ կը զգայ քիչ մը սէր դէպի
իր հայրենիքը եւ կարեկցութիւն դէ-
պի իր դժբաղդ եղբայրները : Այսօր
ստիպողական պէտք կայ որ միանանք,
որպէս զի աւելի շուտ եւ աւելի քիչ
զոհերով կոտորենք նորագոյն վտանգ-
ներուն դէմ եւ ի միասին մտածենք
մեր երկրին ապագային վրայ :

Այս կողմ շատ ճիշդ է Մակե-
դոնական գործողները պէտք է
աչքերնին շրջա բանան իրենց
սպառնացող վտանգին հանդէպ,
մէկ կողմ ձգեն իրենց մասնաւոր
քէններն ու հակառակութիւննե-
րը եւ բնկերակցին համեմաշխ
գործունէութեան մը համար :
Այս բանը պէտք է տեղի ունե-
նայ ժամ առաջ, որովհետեւ իշ-
խանապետութեան պուլիսի ժո-
ղովուրդին անտարբերութեան
պատճառներէն մին ալ մակե-
դոնական գործիչներու բանակ-
ներուն մէջ ի յայտ եկող կա-
զերը, մէկգլմէկ մեղադրելները
եւ մէկգլմէկ ջնջելու միտումները
եղած են :

Միթէ անոնք, մակեդոնական
կազմակերպիչները, չեն մտածե-
ր թէ ինչ տեսակ ցաւալի ազդե-
ցութիւն կ'ընէ պուլիսի հասա-
րակութեան վրայ ամէն մէկ լուր
թէ այս ինչ կազմակերպութեան
խումբը յարձակիք է միւս կազ-
մակերպութեան խումբին վրայ
եւ այլն :

Մակեդոնա—Անդրիանուպոլսե-
ան գործիչները պէտք է գիտ-
նան, թէ միջնա որ չը համա-
ձայնին համեմաշխ գործունէու-
թեան մը համար եւ ցոյց չտան
իրողութիւններով թէ կը զոհեն
իրենց անհատական հայեացքնե-
րը յօգուտ հանրային դատին :

պուլիսի հասարակութեան դէպի
իրենց՝ անհազարգեութիւնը ու
անտարբերութիւնը դիւրաւ չը
պիտի անհետի, եւ մակեդոնա—
անդրիանուպոլսեան դատը, որ
հանուր պուլիսի ազգին դատն է,
պիտի վնասուի :

«ՏՆԵՎՆԻԿ»

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԱՇՈՒԵԿԵԻՈՒԸ

Հետեւեալին հրատարակութիւնը
ինդրուած է մեզմէ :

—o—

Վեցամեայ հաշուելիոյ Հայ Երի-
տասարդաց Միութեան Գործադիր Ժո-
ղովոյ, 1904 ապրիլ 10 էն մինչ 1904
հոկտ. 10

ՄՈՒՏՔ	
77 անձնաւորութիւններէ	գոյացած
նուէր	155. 15
Գանձանակի հասոյթ	12. 70
Բաժնեգրներէ գոյացած	204. 40
	372. 45

ԵԼՔ	
Տեղի համար վեցամեայ	
վարձք	72
Թերթերուն համար վճարուած	73. 50
Ընթերցարանի կարասեաց	
համար վճարուած	92
Ընթերցարանի ժաբու-	
թեան համար վճարուած	24
Ջանադան ծախքեր	17. 75
Գանձապետին քով պատ-	
րաստ դրամ	93. 20
	372. 45

Ի Դիմաց Գործ. Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Տ. Երանյան Ա. Փէշտմալեան
Գանձապետ Գ. Մարտիրոսեան

ԱԶԳԱՅԻՆ

Տիգրիսի դատական վերաբն-
նիչ ատենան վերջերս քննե-
րէ դռնփակ՝ Աշտարակ գիւղի
բնակիչներէն կարապետ Արամ-
եանի, Գարեգին Ամիրեանի եւ
Արմենակ Փարվանեանի դատը,
որոնք Երեւանի նահանգական
դատարանէն դատապարտուած
էին 6 ական ամիս բանտար-
կութեան : Տիգրիսի վերաբն-
նիչ ատենան հաստատելով դա-
տապարտութեան վճիռը 6 ա-
միսի տեղ երկու ամիս բան-
տարկութեան վճիռ տուեր է :
—Թուրքաստանի կողմէն
հասած նորագոյն տեղեկութիւն-
ներէ կը հասկցուի, որ թէեւ
բաւական թուով Հայեր այդ
կողմերը կը դիմեն աւելտրա-
կան նպատակով, սակայն գոր-
ծերը շատ անպատշաճ վիճակի
մէջ կը գտնուին տեղ տեղ :
Հայ ընտանիքներ տարածուե-
րն թաշքէնա—Օրէնպուրկեան
երկաթուղոյ գծին վրայ, ուր
աշխատողները բաւական դրամ
չահեր են : Սկիզբէն եկողնե-
րու յաջողութիւնը առիթ ե-
ղեր է որ ուրիշներն ալ դի-
մեն հետզհետէ, սակայն ուշ
մնացողները դժբաղդաբար զր-
կուեր են յաջողութիւն գտնե-
լէ, եւ մինչեւ իսկ իրենց ճամ-
բուն դրամը չեն կրցեր հայ-
թայթել, տեղերնին վերա-
դառնալու համար, բնականա-
բար կարօտ վիճակի մէջ ձգե-
լով իրենց պարագաներն ալ :
Թաշքէնի մէջ այսօր բաւա-
կան թուով Հայեր կան, սա-
կայն ոչ աղօթատեղի ունին, ոչ

լանթիւնը չէ կամենում գալ եւ ներկայանալ
կաթողիկոսին առելով, թէ նա ուզում է որ
ինձ խայտառակի, վեղարս վայր կը ձգեմ,
կերթամ Ռուսաց եկեղեցին եւ այլն : Թա-
ղէս վարդապետը վերադարձաւ, բայց կաթողի-
կոսին ոչինչ չյայտնեց : Ինձ առանձին կտն-
չեց եւ ասաց, թէ Սալլանթեանը չէ ուզում
գալ, արեւ դու էլ միասին գնանք : Ինչ
թէ համոզեմք եւ գայ : Գնացինք : Սալլան-
թեանը տեղեկացաւ իմ մասին Թաղէս վարդա-
պետից եւ սկսեց կրկնել իւր աստիճաններն
ու համարումը գալուց : Ես սպասեցի, որ փա-
քը ինչ հանդարտի, ապա ասացի. « Արեւդան,
դու յայտնի, ձեր, կոչման, անվայել միջոցնե-
րին էք ցանկանում գիմել : Ինչո՞ւ համար :
Ներսէսի վեհանձն բնաւորութեանը դուք, երե-
ւի, ծանօթ չէք : Նա առիւծի վեհանձնու-
թիւն ունի, եթէ դուք կը խոնարհուէք՝ նա
շատ քաղցրութեամբ եւ հեղութեամբ կը վերա-
բերի Ձեզի ձեզ : Ես աղաչում եմ Ձեզ ինձ լը-
սել, չհակառակել եւ այլն » : Նա պատասխա-
նեց. « Հրեշտակ Աստուծոյ քեզ խօսացրեց, ա՛յ
որդի » եւ վերկացաւ, հանդուկ, փրփր մեզ
տուեց վերցնելու եւ եկաւ մեզ հետ, ներկա
յացաւ կաթողիկոսին, որի մօտ ինչպէս ասա-
ցինք, ժողովուած էին Մոսկուայի իշխաննե-
րն եւ քահանաները : Նա ուզեց համբուրել
կաթողիկոսի աջը՝ եւ վերջինս ասաց. « Աստը-
ւած չնորձք տայ » եւ հրաւիրեց նստել իւր

մօտ ապա հրամայեց տէր Յովակիմ Մէլիքեան
քահանային կարգաւ բարձր ձայնով Սալլան-
թեանի առ Յովաննէս կաթողիկոս գրած նամա-
կըն, եւ սկսեց կարդալ : « Ներսէսը դառա-
մել է, փրկել է, աչքերը կուրացել են, ականջ-
ները խլացել, չէ կարողանում առաջնորդական
պաշտօնը կատարել, շուտով կը մեռնի, նո-
րա կայքը կը յափշտակուի, պէտք է ներսէսին
հրաժարեցնել եւ Բնաւորութեան առաջնորդութիւ-
նը ինձ յանձնել եւ այլն » : Նամակը ընթեր-
ցուից յետոյ կաթողիկոսը դարձաւ դէպի Սալ-
լանթեանը : « Այ՛, օրհնած տես ի՞մ աչքն է կոյր
թէ քոնը (ճիշտ որ Սալլանթեանի աչքերը շատ
կարճատես էին), դու զանկացել եւ կ' : Պօլիս
գնալու եւ ես կը միջնորդեմ տէրութեան քեզ
անցապիւր տալու : Միւս սենեակում ճաշի սեղա-
նըն արդէն պատրաստ էր, եւ կաթողիկոսը
հրաւիրեց բոլորովին, որոնց հետ եւ Սալլան-
թեանին ճաշի, ինչ էր սպասում Սալլանթեանին
եւ ինչով վերջացաւ : Միւս օրը կիրակի էր :
Սալլանթեանին Էկա եկեղեցի, ս. պատարագի
վերջում սկսեց քարոզ ասել. « Այ՛ է Աստը-
ւածընտիր, ա՛յլ է արծաթընտիր եպիսկոպոսա-
պետ, եւ եթէ մենք լռենք նորահաստատ Սը-
րաւնակատար հայրապետ Ներսէսի ազգօգուտ
դրածերի մասին, քարերը կ'աղաղակեն » ասաց նա
քարոզի մէջ : Այնուհետեւ քանի որ կաթողի-
կոսը Մոսկուայում էր՝ Սալլանթեանը միշտ ճա-

չակից էր նորան : Կաթողիկոսը միջնորդեց տե-
րութեան, որ կ' : Պօլիս գնալու անցապիւր տան
նորան : Բայց կ' : Պօլիս Մատթէոս պատրիարքը
ճանաչելով նորա անհանգիստ եւ փոփոխաբա-
րաւորութիւնը, թուրքաց կառավարութեան ձեռ-
քով արգիւնց նորա մուտքը Պօլիս, պատճա-
ռելով թէ նա խառնակիչ է, մենք չենք կա-
մենում նորան մեր մէջ ունենալ :
Կաթողիկոսը Մոսկուայում մնաց երկու ա-
միս, այնտեղի Հայոց Գաղափարեան անկեղծու-
ցը հանդիսով բացեց եւ օրհնեց : ապա Ֆիլա-
րէտ մետրապոլիտի հրաւերին ընդունելով՝ միա-
սին գնացին Մոսկուայից 45 վերստ հեռաւո-
ւորութեամբ Ռուսաց ս. Համբարձման վան-
քըն, որ անուանում են Նոր Երուսաղեմ, ըստ
որում Հին Երուսաղեմի եկեղեցու ձեւովն է շի-
նած եւ Նիկոն Պատրիարքն է հիմնարկել, այն
դիտաւորութեամբ, որ Ռուսներն աւելի աչնտեղ
գնան ուխտի, քան թէ իրանց հարստութիւնը
տանին Տաճկաստան : Մետրապոլիտ Ֆիլարէտը
կարճ միջոցում շատ սերտ բարեկամական սերով
կապուեց Ներսէսի հետ : Նա թէ միջակ հասա-
կով, թէ երեսի կերպարանքով շատ նման էր
Ներսէսին : Սա Ռուսաց անուանի գիտնական
հոգեւորականն էր եւ շատ մեծ յարգանք ու-
նէր ամբողջ Ռուսաստանում :
(Շարունակելի)

ալ գերեզմանատուն, և իրենց նշանակները կը թաղեն եղբր քաղաքին ընդհանուր գերեզմանատունը, այն ալ ոչ թէ հայերուն համար յատկացուած տեղ մը, այլ ուր որ պատահի, Հիմա մտադիր են եղբր խնդրագիր տալ եւ իրենց համար առանձին գերեզմանատուն մը առնենալու աշխատիլ:

«Առհնգանդակ»

ԱՂԲԱՏԱԽԱՄԻ ՀՐԱԽԻՐԸ

Աղքատախնամի Գործ. ժողովը ապեալ նամակներ ցրուելով Ընկերութեան անդամոց. ի նիստ կը հրաւիրէ զանոնք վաղը՝ կիրակի ժամը 2 ին կէս օրէն ետքը:

Փափաքելի է որ գոնէ այս անգամ բաւական թուով անդամներ պատասխանէին այդ մասնաւոր հրաւերին, զի այլապէս Ընկերութեան գործերը կրնային կազալ:

ԹԱՏՐՈՆ

Յառաջիկայ Զորեքշաբթի, ամսոյս 23 ին «Պուլկարի» Թատրոնին մէջ, Պատ. Ս. Մոցիկիանի նախաձեռնութեամբ եւ «ԱՐԻԹԵ» խումբի բարեհաճ մասնակցութեամբ պիտի ներկայացուի, ի նպատակ հայկ. Ընկերացարանի:

ՊԱՏԱՍՍԱՐ ԱՂԲԱՐ

(Գոմէսիա 3 արարուածով)

Հեղինակութիւն Յ. Պարոնեանի, փոխադրութիւն Վրոյրի եւ եւ Սարգսիանի:

Վարչ. Հայկ. Ընկերացարանի

Թուածուգ

14 Հոկտ. 1904

ԹԻԻՐԳԻԱ

Հոկտ. 21 (ն. տ.) թուականաւ Կ. Պօլսէն Թաւի կը հեռագրեն. «Բիւրոսերը վանի մօտ նարեկ գիւղին վրայ խուժելով 20 տուն թաւանի տունն ու այրեցին. բընակիչներէն ալ 30 հոգի սպաննեցին. Զօրք զրկուեցաւ հոն խաղաղութիւնը վերահաստատելու համար»:

—Կ. Պօլսէն կը հեռագրեն թէ յունական հրատարակութեան քիչ գործունէութիւն ցոյց կուտան Սեւանիկի նահանգին մէջ, բացի փոքրիկ հրատարակութեան մը, որուն գլուխը կը գտնուի Իվան Բատնալի անուն մէկը, որ պուլկար հրատարակութեան գէտ կը գործէ Կեղեկիւրի ու Քաղաքացի շրջականները:

—«Տնեղանիկ» ստացած մասնաւոր տեղեկութեան մը համեմատ, 30 Պուլկարներ ձերբակալուել են Մանասաւրի մէջ, որովհետեւ անոնց քով գտնուել են ինչ ինչ ծածկագրեալ նամակներ, որոնց համար իշխանութիւնը կը կասկածին թէ յեղափոխական կարեւոր գաղտնիքներ կը պարունակեն:

ՊԱՏԵՐԱԶՄ

Լոնտոն 13 հոկտ.—Չարը հեռագրելով Անգլիոյ թագաւորին իր խորին ցաւակցութիւնը յայտնեց է աննախատեսելի դժբաղդութեան վրայ: Այս հեռագիրը լաւ տպաւորութիւն գործեց հոս կը կարծուի որ միջադէպը շուտով պիտի կարգադրուի: Այսօր Հըլի մէջ գիւղերու զինութիւնը կատարուեցաւ ի ներկայութեան ռուսական զեւպան Պենքենտորֆի: Հինգշաբթի թաղումը տեղի պիտի ունենայ:

—Լոնտոն ն. թ.—(Բեռլին) Ալթերնէյն (Քօրէյալի մէջ) կը հեռագրեն, թէ մեծ հրդեհ մը պատահելով ճարտարական 8 պաշարի, ռազմանիւթերու մթերանոցներ միւսիւր դարձան. Կենդանիները որ հրդեհը գիտմամբ եղած է, Պաշտօնեաներէն երկուքը անձնասպան եղան:

—Լոնտոն ն. թ.—«Ինթէր» կ'իմանայ թէ անգլիական կառավարութիւնը իր Բեռլինի արարքին հետեւանքով փնտռողներուն: Մանուցագիրը կը պահանջէ նաեւ որ անմիջապէս քննութիւն մը բացուի, և արդիւնքին համեմատ պէտք եղածը գործադրուի:

Լոնտոն — «Տէլի Թէլեգրաֆ» լրագիրը կ'իմանայ թէ Պալթիկեան նաւատորմին ընկերացող «Նատէթա» բեռնարար շոգենաւը ծակուելով (խիստ հաւանականաբար ձկնորսներէն, որոնք ուզած են Հըլի աղէտին վրէժն առնուլ) ընկղմեցաւ, որով Ռուսներուն 2, 500, 000 լեվի փաստ մը եղած է:

Լոնտոն ն. թ.— Եգիպտոս թագաւորը իր խորին ցաւը յայտնեց Հըլի քաղաքացիներին ռուսական նաւատորմին աններելի արարքին վերաբերմամբ. և աղաչեց անոր որպէսզի իր և թագաւորին վշտակցութիւնը յայտնէ զոհերուն ընտանեաց: Բեռլինի արարքը — Ն. թ. կայսերական ռուքադով — զօրապետ Բուրբաթիկին Մանչուրիոյ բանակներուն ընդհանուր հրամանատար անուանուեցաւ:

Թօքիօ ն. թ.— Մարաշախտ Օյամա կ'իմացունէ, թէ Շահէի մօտի ճակատամարտին մէջ ճաբանցիներուն ընդհանուր կորուստը, սպաննուած, վիրաւոր ու անհետացած ռազայ, 15870 հոգիի կը հասնի:

—Բարիչ 14. հոկտ.— Բեռլին պուլկար արտաքին գործերու, պաշտօնատան մէջ կը բարկանան ծովային նախարարութեան, որ գիւղական թիւրիմացութիւններու տեղի կուտայ, մինչդեռ ընդհակառակն ծովային նախարարութեան գլուխը գտնուողները կը հաւնին Բոթանթիլեմաքի ընթացքին:—Չարը խորապէս վշտացած է աղէտի մասին:

Լրագիրները, իսկ գլխաւորապէս «Ֆիկար», ճարտարական լրատեսներու մասին ռուսական կասկածները կ'արգարացնեն: Միջերկրականի ամէն նաւահանգիստներուն մէջ շատ մը ճարտար լրատեսներ կը գտնուին, որոնք լրատարակողի դեր կը կատարեն: Քրօնշթաուի նաւատորմին մեկնելուն հետ մէկտեղ, ըստ լրատարակողները անյայտացան. անոնք Լոնտոն մեկնեցան:

—Քօլոն 14. հոկտ.— «Բեռլին» լրագիրը անգլիական լրագրերու հետ ունեցած բանավէճին մէջ կըսէ, թէ Գերմանիան չէր քրօնութեան դէմ դրած չէ Ռուսիոյ հայթայթումներ ընելու, քանի որ ինքը Անգլիան ալ 30 նաւ հայթայթած է ճարտարի, եւ գրեթէ պալթիկեան նաւատորմին ամբողջ պատերազմանիւթերը ու միսը:

—Վիկտ.— (Սպանիական ծովագիր) ն. թ.— Պալթիկեան նաւատորմին հինգ նաւերն հասան. միւսներն ալ կ'սպասուին, Բեռլինի արարքին: Ն. թ.— «Ժուրնալ» ար. Ս. Բեռլինի արարքին հանգանակութիւն մը բացած է Հըլի արկածեալներուն համար:

Լրագիրը կըսէ, թէ ձկնորսներուն պատահած արկածին մասին Ռուսերը այնչափ ցաւ կը զգան, որչափ Անգլիացիները: Յամենայն դէպս, Չարին կառավարութիւնը այնպիսի փոխարինութիւն մը պիտի ընէ, որ գոհ ձգէ Ռուսիոյ ու Անգլիոյ արդարապէս զգացումները:

ՎԻՐՁԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լոնտոն 13 հոկտ.— Սթանլաւտի կ'իմացունեն Շահկայէն, թէ Բօրթ-Արթուր կ'այրէջ հոկտ. 12 ի ամբողջ օրը:

—Լոնտոն ն. թ.— Լորտ Լանստաուն ստացաւ Բոթանթիլեմաքի փոխ-ծովակալին տեղեկագիրը, ուրիշ կը հասկցուի թէ ինչպէս ռուս նաւային սպանները երկու ձկնորս նաւեր թորփիլանաւի նըմանցունելով ճարտարական կործան էին զանոնք: Մովակալը կը կարծէ, թէ նաւատորմը այդ երկու նաւերուն վրայ իրայն կրակ ըրու: Սպանները կ'անդիմադրեն թէ ձկնորս նաւ մը ընկղմուի:

մած էր: —Լոնտոն ն. թ.— Լրագիրները վախ կը յայտնեն, թէ Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ յարաբերութիւնները սուր կերպարանք մը չառնուն, քանի Չարը մերժեց է պատժել Հըլի միջադէպին յանցաւոր սպանները:

ՈՒՇԱՎՐՈՒԹԻՒՆ

Երաշխատուած թուում. չղային և համանուն հիւանդութիւնների քառասունը:

ՍՄԵՆԱՆՈՐ ԳԻՒՏ

«Էլէքթրա» միջնային ծանօթ ամենալաւ դարմանէ հետեւեալ հիւանդութեանց. Յօդաքաւ, արեան կուտակում, ականջի խժժում, սրտի բարձրում, կարճաճ սրտի, զոգդանք մարմնին կամ անոր մասերուն, ստամոքսի, ձեռքերու կամ ոտքերու ջղաձգութիւն, միզաթուլութիւն, անքնութիւն, ջղային զիւսացաւ, ձեռքի կամ ոտքի պաղութիւն կամ քրտինք, անորժակի պակասութիւն, անորժակի զիւս պոյս եւ համանուն հիւանդութիւններ:

Գործիքին գինն է 7 ֆր. Թղթաւորով 80 սանդղմ աւելի:

Սարուածի (թաղմ) մը գինն է 15 ֆր. Բամպուրով 70 սանդղմ աւելի: Սարուածը «Թաղմ» կը ծառայէ միայն վեց տարու ընէ աւելի հին հիւանդութեանց համար:

Պուլկարիոյ համար ներկայացուցին է ԿեՕՐԿԻ ՎԵՐԿԵԱՆ եւ Ընկ. Բուսուլուգ փողոց Թոնգա Նամբո 11/II

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ,	հ.կա.	16
ՉԱԽԻՐԷ		
Վալիս	54-60 լիպ.	9.80 / 11.80
Արապա	52-62 լիպ.	9 / 12 20
ԱՐԱՎ,		
Վալիս 100 քիւլո հին		
նոր	10. —/10.10	
Արապա 42-45 լիպ.	5.40/ 6.	
ԵՆՈՒՄԱՐԱՐԱՎ 33/36 լիպ. 4.	20/4. 40	
Վալիս 100 քիւլո	10. 40/10. 60	
ՅԱՍՈՒԼԵՆ	100 քիւլո —	26. — 28
Արապա 100 քիւլ.	25 — 29	
ՏԱՐԸ արապա 40 ք		
ԳՕԼՕՁ արապա 55-60 լիպ	9. 90 / 11	
ՄԻՍԻՐ 100 քիւլ		
ՉԱՎՏԱՐ արապա	7.90 — 8. 10	
« Վալիս	7.60/8.	
Կիւնաէ 40 — 50 Վալիս վէ	7-800	
արապա կէլմէքսէ. Վալիս մուամէլէս		
նարուէս 20 ֆր. արապա մուամէլէս		
նարուէս 20. 20.		

ՍՐԱՐԱՅԻՑԷ

Նարուէս 20, 20 ֆրանք
Օսմ. լիւրսը 22, 75 ալթուն ֆրանք

ՊԱՐԱԼԻՑԷ

Վարնա բիացաքնաւ պաղգալիյէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթուն ֆրանք իւլէ:	
ԳԱՀՎԷ	1,90/2
ՇԷԲԷՐ ՆԷՄԵ	70
ՇԷԲԷՐ (քէսմէ) սանդղ	38.
ԲԻՐԻՆԷ Ֆիլիպէ չուվալը	47.
» ճարտն »	38.
» Ինկիլիզ »	28
» Բիզոն »	50
ԿԱՁ, անսղը	9. 50
ՉԷՅԻՐԻՆ Էաղը քիւլ	90. — 1
ԳՈՒՐՈՒ Էաղը	30